

չարկէ երեք հոգի, որպէս զի կաթողիկոսն անոնցմէ մին Առաջնորդական Տեղապահ անուանէ ըստ ցակայութեան միջոցին համար: Կաթողիկոսը կը գրէ. «Գու գրես թէ կարնեցի կարապետն լաւ է. ահա նա եւս ի թիֆլիզ է եւն: Նա քանիցս մեզ գրէ թէ զիս աստի հան: Միւս երկուքին յարմար չըլլալը կամ անոնց ընդդիմութիւնը կը ծանուցանէ. նոյն պատճառները կուտայ նաեւ կարապետին համար (էջ 271—279): Ի վերջոյ կ'իմացուի՝ որ կարապետ վ. ը թիֆլիզի Առաջնորդ անուանած է արդէն 1781ին, վասն զի Ղուկաս Կթղկս. առ Իսրայէլ վճաց Կթղկս. 27 Օգ. 1781ին գրած նամակին մէջ զկարապետ կը յիշէ իբրեւ Առաջնորդ. «... Ահա մէկ պահարանով թուղթ յղեցաք առ քեզ ընդ թղթոյս, որ պարտի հասանիլ առ թիֆլիզու Առաջնորդ կարապետ վարդապետն մեր...»: Գարձեալ նոյն տարին Նոյ. 9ին կը գրէ թիֆլիզու Առաջնորդ կարապետ վարդապետին (էջ 205—211): Աւելի հետաքրքրական է յաջորդ թուղթը: 1782 Մարտի մէջ կաթողիկոս օրհնութեան թուղթ մը կը գրէ կաթողիկէութենէ վերադարձողներուն. ասոր պատճառ եղած է Գեօրի քաղաքին մէջ Սահակի որդի Մանուչարեան Ստեփանոս, որ ի սկզբան կաթողիկէ եղեր է եւ յետոյ վերադարձեր է, ինչպէս կը ծանուցանէր թիֆլիզի Առաջնորդ կարապետ Արքեպ. ահաւասիկ կաթողիկոսին խօսքերը. «Ձի գրեալ էր մեզ ի թիֆլիզու՝ սիրելին մեր՝ եւ հարազատ որդին սրբոյ Աթողոյս՝ առաջնորդ կարապետ